

ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ՄՐՑԱՄԱՐՏԵՐ_1-9

Օգտագործելով նվազագույն թվով լուցկու հատիկներ (լուցկիներ), անհրաժեշտ է հարթության վրա կառուցել n հատ քառակուսիներ, որոնցից յուրաքանչյուրի կողմը լուցկու մեկ հատիկ է: Լուցկիները չի կարելի կոտրել կամ իրար վրա դնել: Քառակուսիների գագաթները պիտի լինեն այն կետերը, որտեղ հավում են լուցկիների ծայրակետերը, իսկ կողմերը-լուցկիները:

Գրել ծրագիր, որը ելնելով կառուցվելիք քառակուսիների n քանակից, կհաշվի անհրաժեշտ լուցկիների մինիմալ թիվը:

Մուտքային տվյալներ.

Մուտքի միակ տողում տրված է n բնական թիվը, որը չի գերազանցում 10^9 -ը:

Ելքային տվյալներ.

Ելքում պետք է արտածել մեկ ամբողջ թիվ - n հատ քառակուսիներ կառուցելու համար պահանջվող լուցկիների մինիմալ թիվը:

Օրինակ.

N	stdin	stdout
1	4	12